# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

**ՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/3 ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման և ամփոփման նիստի**

ք. Ջերմուկ 27.07.2022թ.
ժամը 16:00

*Հանձնաժողովի նախագահ՝*
*Աշոտ Խաչատրյան(ԳԱԴ)*

*Հանձնաժողովի անդամներ՝*
*Արսեն Գաունիկյան(ԳԱ)*
*Աղասի Առաքելյան(ԳԱ)*
*Վաhե Ղազարյան(ԲԱ)*
*Ստեփանոս Վարդանյան(ԲԱ)*

*Հանձնաժողովի քարտուղար՝ Սմբատ Պապայան*

*Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2) կետի հիման վրա*

*ՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/3 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման և արդյունքների ամփոփման մասին*

1. Ընդունել ի գիտություն, որ հայտ էին ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| N | Մասնակցի անվանումը | Գործունեության հասցեն | Կապի միջոցը<br>էլ.փոստ, հեռ.համար |
|---|---|---|---|
| 1. | «Ջերմուկշին» ՓԲԸ | ք.Ջերմուկ,Շահումյան 25 | seno.stepanyan@mail.ru, 091762771 |
| 2. | «Սուսմեռ» ՍՊԸ | ք.Մարտունի,Կարապետյան 50 | tun22@mail.ru, 094043396 |

2. *Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացված հայտի,ինչպես նաև փաստաթղթերի իրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.*

2.1 «Ջերմուկշին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ՝ մասնավորապես.

1) Հավելված 1-ը(Դիմում-հայտարարություն), Հավելված 1.3-ը(իրական շահառուների հայտարարագիր)և Հավելված 1.1-ը(սարքեր,սարքավորումների նկարագիր) ստորագրված չեն էլեկտրոնային ստորագրությամբ:

2) Հավելված 1.3-ի(իրական շահառուների հայտարարագիր) մեջ լրացված չէ իրական շահառուի ՀԾՀ-ն, լրացված չեն 3.5 և 3.7 բաժինները:

3) Հավելված 2-ը(գնային առաջարկ) և ծավալաթերթը ստորագրված են այլ անձի կողմից:Ներկայացնել անձի ստորագրության իրավասություն ունենալու հիմքեր:

2.2 «Սուսմեռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ՝ մասնավորապես.

1) Ներկայացված չէ Հավելված 1.1-ը:
2) Ներկայացված չէ ծավալաթերթը:
3) Հավելված 1.3-ի(իրական շահառուների հայտարարագիր) մեջ նշված է միայն 90% փայաբաժնին տիրապետող շահառու(տվյալները):Խնդրում ենք ամբողջացնել:
4) Ներկայացված չէ լիազորված անձի անձնագիրը(նույնականացման համար):

4.Մասնակիցների առաջարկած գները,ըստ չափաբաժինների. ՀՀ դրամ

| Հ/Բ | Կազմակերպության անվանումը | Գնման գինը Թվերով (տառերով) | Ինքնարժեք և Շահույթ /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Ջերմուկշին» ՓԲԸ | 41946380 (քառասունմեկ միլիոն ինը հարյուր քառասունվեց հազար երեք հարյուր ութսուն) | 34955000 (երեսունչորս միլիոն ինը հարյուր հիսունհինգ հազար) | 6991000 (վեց միլիոն ինը հարյուր իննսունմեկ հազար) | 41946000 (քառասունմեկ միլիոն ինը հարյուր քառասունվեց հազար) |
| | «Սուսմետ» ՍՊԸ | | 34950000 (երեսունչորս միլիոն ինը հարյուր հիսուն հազար) | 6990000 (վեց միլիոն ինը հարյուր իննսուն հազար) | 41940000 (քառասունմեկ միլիոն ինը հարյուր քառասուն հազար) |

5. Հաշվի առնելով սույն արձանագրության 2-րդ կետով արձանագրված անհամապատասխանությունները՝ համաձայն իրավերի 8.9 և ՀՀ կառավարության՝ 04.05.2017թ. 526-Ն որոշման 41-րդ կետերի նիստը կասեցվել էր մեկ աշխատանքային օրով: Մասնակիցներին ծանուցվել էր անհամապատասխանությունների մասին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները: Արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկվել են մասնակիցների կողմից:

6. 5-րդ կետով արձանագրված անհամապատասխանությունների ամփոփումից հետո մասնակիցների հետ՝ համաձայն 04.05.2017թ.-ի 526-Ն կառավարության որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի և ՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/3 ծածկագրով ընթացակարգի իրավերի 8.7 կետի վարվել են բանակցություններ, որի արդյունքները ներկայացվում է ստորև.

| Հ/Բ | Կազմակերպության անվանումը | Գնման գինը Թվերով (տառերով) | Ինքնարժեք և Շահույթ /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|---|
| | «Ջերմուկշին» ՓԲԸ | 41946380 (քառասունմեկ միլիոն ինը հարյուր քառասունվեց հազար երեք հարյուր ութսուն) | 34955000 (երեսունչորս միլիոն ինը հարյուր հիսունհինգ հազար) | 6991000 (վեց միլիոն ինը հարյուր իննսունմեկ հազար) | 41946000 (քառասունմեկ միլիոն ինը հարյուր քառասունվեց հազար) |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Սումետ» ՍՊԸ | | **34783333** (երեսունչորս միլիոն յոթ հարյուր ութսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք) | **6956667** (վեց միլիոն ինը հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) | **41740000** (քառասունմեկ միլիոն յոթ հարյուր քառասուն հազար) |

**ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝**

**Հաշվի առնելով վերոգրյալները.**

1. **ՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/3 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Սումետ» ՍՊԸ-ին, իսկ այդպիսին չճանաչված մասնակից՝ «Ջերմուկշին» ՓԲԸ-ին:**
2. **Հաստատել գնում կատարելու ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:**
3. **«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:**
4. **Անգործության ժամկետի ավարտից հետո և այդ ընթացքում բողոքների բացակայության պարագայում պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման ապահովում՝ գնման գնի 15 տոկոսի չափով և պայմանագրի ապահովում՝ գնման գնի 10 տոկոսի չափով, միակողմանի հաստատած հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով:**

   **Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կկնքվի, եթե վերջինս ներկայացի պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը:**

   **Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

5. *Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.*

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | ________________ | *Աշոտ Խաչատրյան* |
| *Հանձնաժողովի անդամներ՝* | ________________ | *Արսեն Գասնիկյան* |
| | ________________ | *Աղասի Առաքելյան* |
| | ________________ | *Վահե Ղազարյան* |
| | ________________ | *Ստեփանոս Վարդանյան* |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | ________________ | *Սմբատ Պապյան* |